Արձանագրություն №3 */Протокол №3/*
գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի */внеочередного заседания оценочной комиссии/*

1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագրի), գնման առարկայի ձեռքբերման, նիստի անցկացման մասին */Данные о заказчике, процедуре (коде), о приобретаемий услуги, о проведении заседания/*	
Պատվիրատու/ *Заказчик*	«ՀԱԷԿ» ՓԲԸ/ *ЗАО "ААЭК"*
Գտնվելու վայրը/ *Адрес*	**ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր/** *РА, Армавирский марз, г. Мецамор*
Ընթացակարգի ծածկագիրը/ *Код процедуры*	**ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/22**
Ձեռք բերվող ապրանքի անվանումը/ *Наименование приобретаемой услуги*	**«Մեդիափոխարկիչ, համակարգչային տեխնիկաների օժանդակ նյութեր»** */ Медиаконвертор, вспомогательные материалы для компьютерной техники*
Նիստի անցկացման վայրը/ *Место проведения заседания*	**«ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենք, 135 Ա սենյակ/** *ЗАО "ААЭК", административный корпус*
Նիստի անցկացման օրը և ժամը/ *Дата и время поведения заседания*	**27.12.2022թ. ժամը 14:00/** 27.12.2022г. в 14:00 ч.
Նիստի անցկացման նպատակը *Цель проведения заседания*	**Պարզաբանում տրամադրելու մասին/** О предоставлении разъяснений

2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի, մասնակիցների կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների մասին

2. Данные о составе, участниках комиссии или уполномоченных ими представителей, присутствовавших на заседании

Հանձնաժողովի նախագահ/ *Председатель комиссии*	**Ա. Գասպարյան/** А. Гаспарян	**ԳՄԾ պետ** / Начальник СЗС
Հանձնաժողովի անդամներ/ *Члены комиссии*	**Բ. Բեջանյան** / Б. Беджанян	**ԱԲ պետ** / Начальник БП
	Վ. Գալոյան/ В. Галоян	**ՋԱՋԱ 1-ին կարգի ճարտարագետ** /*Инженер 1-ой категории ЦТАИ*
Քարտուղար/ *Секретарь*	**Շ. Ղազարյան/** Ш. Казарян	**ԳԸԲ մասնագետ/** специалист ОЗП
Այլ տեղեկություններ / *Другая информация*	***Հանձնաժողովի անդամ Վ. Մանուկյանը նիստին ներկա չի/*** *Член комиссии В. Манукян не присутствует на заседании*	

Համակարգող քարտուղարը ներկայացրեց ,որ ստացել է պարզաբանման հարցումներ հետևյալ բովանդակությամբ՝ */Координационный секретарь сообщил ,что получил разъяснения по следующему содержанию:*

1. **Բարի օր կարող եմ ճշտել պրոքսիմիթի քարտերը 125 kHc , արդյոք ունեք տեղադրված համակարգ և ինչ համակարգ է , ինչ ընթերցիչներ են եթե հնարավոր է տրամադրեք մոդել:/**
   Добрый день могу ли я проверить карты проксимита 125 КНК, установлена ли у вас система и что это за система, какие считыватели если возможно, предоставте модель.
2. Հարգելի՛ պատվիրատու, առաջին չափաբաժնով պահանջվող քարտերին ներկայացված է հետևյալ պահանջը. «HID; 1386LGGNN-ISOProx II Card, 125KHz Programmed. Front Packagin/Back Packaging-Plain White PVC w/Gloss Finish; No external Card Numbering, no slout punch, Bit Numbers 37, Format Number H10304. FC????? ճշտել պատվիրատուի հետ:» ----Ինչպես նաև տրամադրվել է հետևյալ պարզաբանումը. «Գնահատող հանձնաժողովը վերանայեց հրավերում ներառված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը և որոշեց ներկայացնել պարզաբանման պատասխան հետևյալ բովանդակությամբ. HID; 1386LGGNN-ISOProx II Card, 125 KHz Programmed. Front Packagin/Back Packaging-Plain White PVC w/Gloss Finish; No External Card Numbering, No slout punch, Bit Numbers 37, Format Number H10304. FC????? (Պատվիրել գաղտնի կոդով, նմուշները ստանալուց և տեղում փորձարկելուց հետո, նոր կնքել պայմանագիր):» ---- Համաձայն HID Global ընկերության կողմից տրամադրված տեղեկության H10304 (HID Tracked 37-bit with Facility code) ֆորմատով թողարկվող քարտերի դեպքում FC կոդերը կցվում են կոնկրետ դիդտրիբյուտորների և նրանք են միայն ստանում բացառիկ իրավունք պատվիրելու քարտեր իրենց կցված FC կոդով (կոդերով): Այսինքն պահանջը, որ պայմանագրի կնքման փուլում քարտերը պետք է պարունակեն Ձեր կողմից պահանջվող FC կոդը, նշանակում է, որ դրանք պետք է պատվիրվեն Ձեր կողմից ըմտրված դիստրիբյուտորի միջոցով, առանց բացառությունների: Ցանկանում ենք հիշեցնել, որ համաձայն ՀՀ Գնումների Մասին Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի. «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի. «Գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է

լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»: Համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի. «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»: -----Միևնույն ժամանակ, ըստ մեր տեղեկությունների, HID Global ընկերությունը հատուկ նման դեպքերի համար հնարավորություն ունի տրամադրելու Corporate 1000 48-bit ֆորմատով քարտեր H10304 37-bit ֆորմատի փոխարեն, որի դեպքում Facility code- ի փոխարեն նշվում է Company ID կոդը, որը կցվում է վերջնական օգտագործողին, այլ ոչ թե որևէ դիստրիբյուտորի՝ հետագայում պատվիրատուին հնարավորություն տալով լիազորելու հաղթող մասնակցին իրեն կցված Company ID ով քարտեր պատվիրելու: -----Մեր կարծիքով, գնման առարկայի այսպիսի բնութագրերը ամբողջությամբ և հստակ չեն նկարագրում ձեռք բերվող ապրանքի հատկանիշները և նույնիսկ պայմանագրի կատարման փուլում պահանջելով, որ քարտերը պետք է ունեան H10304 37-bit ֆորմատ և կոնկրետ FC կոդ, անուղակի հղում է կատարվում կոնկրետ դիստրիբյուտորին, ինչն առաջացնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ և ստեղծում են մրցակցության անհավասար պայմաններ: -----**Ուստի խնդրում ենք վերանայել Ձեր պահանջները ինչպես նաև պարզաբանել, ինչո՞վ է պայմանավորված H10304 37-bit ֆորմատի ընտրությունը: Ընդունելի՞ են արդյոք Corporate 1000 48-bit ֆորմատով թողարկված քարտերը, եթե ոչ, ապա ի՞նչ հիմնավորմամբ: Շնորհակալություն:/** *Поэтому, пожалуйста, ознакомьтесь с вашими требованиями а также поясните, чем обусловлен выбор 37-битного формата H10304? Приемлемы ли карты, выпущенные в 48-битном формате Corporate 1000, если нет, то на каком основании?*

3. **Հարգելի գործընկեր խնդրում եմ պատասխանել 30164000/1. Քարտ Գոյություն ունեցող վերահսկիչը կաջակցի՞ արդյոք մեկ ուրիշ կամ մի քանի տարբեր FC քարտերի ձևաչափին ? Տրամադրել առկա քարտատուփի պատկեր՝ ծրագրավորման մանրամասներով և քարտի պատկերով ներկայումս օգտագործվող ընթերցող սարքի մոդելի մանրամասները, մասի մակնիշը**

Հանձնաժողովի քննարկեց և որոշեց՝

Комиссия обсудила и решила:

ՀԱԷԿ-ի կարիքների համար անհրաժեշտ են նշված բնութագրով քարտերը անկախ նրանից, թե ինչ կարդացող սարքեր կօգտագործվեն: Նախորդ հարցման ժամանակ տրվել է պարզաբանում HID; 1386LGGNN-ISOProx II Card, 125 KHz Programmed. Front Packagin/Back Packaging-Plain White PVC w/Gloss Finish; No External Card Numbering, No slout punch, Bit Numbers 37, Format Number H10304. FC????? (Պատվիրել գաղտնի կոդով, նմուշները ստանալուց և տեղում փորձարկելուց հետո, նոր կնքել պայմանագիր):

Необходимы карты с указанной характеристикой для нужд ЗАО ААЭК независимо от того, какие устройства чтения будут использоваться. В предыдущем опросе были даны разъяснения HID; 1386LGGNN-ISOProx II Card, 125 KHz Programmed. Front Packagin/Back Packaging-Plain White PVC w/Gloss Finish; No External Card Numbering, No slout punch, Bit Numbers 37, Format Number H10304. FC????? (Заказ с секретным кодом, после получения образцов и тестирования на месте, только подписать контракт)

Ընդունվեց որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0

Принято решение: за – 3, против – 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Председатель комиссии _____ Ա. Գասպարյան/ А. Гаспарян

անդամներ՝

Члены комиссии _____ Բ. Բեջանյան / Б. Беджанян

_____ Վ. Գալոյան/ В. Галоян

_____ Վ. Մանուկյան/В. Манукян

Համակարգող քարտուղար՝

Координирующий секретарь _____ Շ. Ղազարյան/ Ш. Казарян